ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԴԱՎԹԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՋՆԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուսաննա Միհրանի Փիլոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Սամվել Սուրենի Խուդոյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սյուզի Ֆելիքսի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. հունիսի 17-ին, ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 16–ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Փոխակերպվող հասարակության պայմաններում, երբ հասարակության առջև դրվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային լուրջ վերափոխումների խնդիրներ, անձի ակտիվության ուղղորդման և անձնային հատկությունների նկատմամբ հասարակական պահանջներն արմատապես փոխվում են, ինչի հետևանքով բարդանում են նաև սոցիալական միջավայրին հարմարումը, անձի ինքնադրսևորման, ինքնահիրացման ուղիների և միջոցների ընտրությունը: Այս համատեքստում առաջին պլան է մղվում անձի ակտիվության հիմնական գործոնների և նրանց փոխհարաբերության դրսևորման առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրությունը՝ ներդաշնակ և բազմակողմանի զարգացած հասուն անձնավորության ձևավորման մեխանիզմների բացահայտման և հիմնախնդրի տեսական ու մեթոդական հիմքերի կատարելագործման նպատակով:

Անձի ակտիվության կարգավորման մեխանիզմների համակարգում պահանջմունքներն առանձնահատուկ բազմաֆունկցիոնալ դեր ունեն: Պահանջմունքները դրսևորվում են անձնային կառույցի մյուս բաղադրիչների հետ փոխներգործությամբ, իրենց ազդեցությունն են ունենում այլ կառույցների ձևավորման վրա և կրում են նրանց ազդեցությունը: Թեև անձի դրդապատճառային ոլորտը վաղուց ի վեր հոգեբանության կենտրոնական հիմնախնդիրների շարքում է, այնուամենայնիվ, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորում են վերջինիս տարբեր բաղադրիչների ու գործոնների հետազոտությունների արդիականությունը:

Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության մեջ քննարկվել են պահանջմունքների և հույզերի, պահանջմունքների և դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների փոխպայմանավորվածության հարցերը: Անձնավորության դրդապատճառային կառույցի հիմնական բաղադրիչները, վերջիններիս փոխհարաբերության տարբեր դրսևորումներն ու առանձնահատկությունները ուսումնասիրվել են ակտիվության, մոտիվացիայի ձևավորման մեխանիզմներում, գործունեության և ադապտացիայի արդյունավետության համատեքստում:

Անձնային կառույցների և մոտիվացիոն գործոնների փոխհարաբերության վերաբերյալ տարբեր հետազոտողների տեսակետներում փաստվում է, որ անձնային հատկությունները մասնակցում են մոտիվացիայի ուղղվածության և դրդապատճառների ձևավորման գործընթացին, դրդապատճառային կառույցների և անձնավորության հատկությունների ու գծերի միջև երկկողմանի կապ, փոխպայմանավորվածություն գոյություն ունի: Սակայն, չկան պահանջմունքների հիմնական խմբերի և անձնային հատկությունների փոխհարաբերության առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրություններ: Դեռևս բավարար լուծում չեն ստացել պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության դրսևորման առանձնահատկություններն ու մեխանիզմները պարզաբանող հարցերը: Անբավարար են ուսումնասիրված պահանջմունքների հիմնական խմբերի դրսևորման առանձնահատկություններում անձնային հատկությունների գործառույթները: Պահանջմունքային խմբերում տարբեր

բաղադրիչների ակտիվացման և իրացման գործընթացը չի ուսումնասիրվել անձնային հատկությունների դրսևորման տարբեր համադրությունների տեսանկյունից: Այդ անհրաժեշտությունն էլ հիմք է ծառայել մեր թեմայի ընտրության համար:

Ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել հիմնային պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման առանձնահատկությունները:

Գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ելնելով ադապտիվ նպատակահարմարությունից, անձնային հատկությունների և պահանջմունքների փոխհարաբերությունը տարբեր կերպ է դրսևորվում. պահանջմունքային խմբերում բաղադրամասերի դրսևորումները պայմանավորված են անձնային հատկությունների տարբեր համադրություններով, պահանջմունքների դրսևորումներում անձնային որոշ հատկություններ գործառույթային իմաստով գերակա նշանակություն ունեն, անձնային հատկությունների որոշակի համադրությունների դեպքում պահանջմունքային համակարգում առանձին բաղադրամասեր նոր գործառույթ են ստանձնում:

Ուսումնասիրության գիտական վարկածից և նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Վերլուծել ակտիվության աղբյուրների համակարգում պահանջմունքների դերի և նշանակության, անձնային կառույցի այլ բաղադրիչների հետ պահանջմունքների փոխհարաբերության տեսափորձարարական առկա մոտեցումները:
2. Բացահայտել նյութական, անվտանգության, սոցիալական, ընդունված լինելու և ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման, բավարարման միջոցների ընտրության և վերահսկման գործընթացը կարգավորող առավել կարևոր անձնային հատկությունները:
3. Բացահայտել պահանջմունքային համակարգի բաղադրիչների դրսևորման մեխանիզմները:
4. Վեր հանել անձնային հատկությունների գործառույթները պահանջմունքների տարբեր դրսևորումներում:
5. Բացահայտել մասնագիտության բնութագրի և գործունեության ուղղվածության դերը՝ անձնային հատկությունների և հիմնային պահանջմունքների փոխհարաբերության դրսևորումներում:

Հետազոտության օբյեկտն է՝ անձի ակտիվության մեխանիզմներն ու անձնային հատկությունները:

Հետազոտության առարկան է՝ անձի հիմնային պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման առանձնահատկությունները:

Հետազոտության ընտրակազմը: Հետազոտությանը մասնակցել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2-րդ կուրսի 139 ուսանող: Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են կենսաբանության բաժնի 31, անգլիական բաժնի 45, մաթեմատիկայի բաժնի 27 և երաժշտական կրթության բաժնի 36 ուսանողներ:

Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել Բ. Գ. Անանևի, Բ. Ֆ. Լոմովի, Վ. Պ. Կուզմինի, Վ. Դ. Շադրիկովի կողմից մշակված

հոգեբանական ուսումնասիրությունների համակարգային մոտեցումը: Մոտիվացիայի ուսումնասիրության Վ. Դ. Շադրիկովի հայեցակետը, դրդապատճառների և հատկությունների փոխհարաբերության Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Գ. Կովալյովի, Ա. Ն. Լեոնտևի, Պ. Մ. Յակոբսոնի տեսակետները, Յու. Մ. Օրլովի պահանջմունքների՝ որպես բազմաֆունկցիոնալ կառույցի հայեցակետը, Ա. Ասմոլովի համակարգային էվոլյուցիոն-պատմական տեսությունը, Պ.Կ. Անոխինի ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը: Պատճառականության, սոցիալական պայմանավորվածության, գիտակցության և գործունեության միասնության հոգեբանական սկզբունքները:

Հետազոտության մեթոդներն ու դրանց ընտրության հիմնավորումը: Ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառվել են դիտման, գործունեության արդյունքների վերլուծության և թեստավորման մեթոդները:

Պահանջմունքային համակարգի ուսումնասիրության նպատակով օգտագործել ենք Ի. Լ Սոլոմինի կողմից մշակված «Գունային փոխհարաբերությունների հոգեսեմանտիկ մեթոդիկան»: «Հիմնական պահանջմունքների բավարարվածության աստիճանի ախտորոշում» մեթոդիկան (ըստ՝ Լ.Դ. Ստոլյարենկոյի) կիրառվել է քանակական ցուցանիշներ ստանալու և համահարաբերակցային վերլուծություն կատարելու համար:

Հետազոտության նպատակին և առարկային համապատասխան կիրառվել են հոգեբանական գիտության և պրակտիկայի մեջ ընդունված անձնային հատկությունների ուսումնասիրության հետևալ մեթոդիկաները.

- Անձնավորության ուսումնասիրության FPI հարցաթերթիկի ձևափոխված տարբերակ,
- Բնավորության շեշտվածության տիպերի ուսումնասիրության Լեոնհարդ-Շմիշեկի հարցարան,
- Անձնավորության հատկությունների շեշտվածության և նյարդա-հոգեկան անկայունության ուսումնասիրության հարցարան,
- Ե.Պ. Իլյինի և Պ. Ա. Կովալյովի «Անձնային ագրեսիվություն և կոնֆլիկտայնություն» մեթոդիկա,
- «Տագնապայնության իրադրային և անձնային տեսակների ախտորոշման» Չ.Դ. Սպիլբերգերի հարցարան,
- Ռ. Կետտելի «16-գործոնային անձնային հարցարան»:

Հետազոտության գիտական նորույթը: Համակարգային մոտեցման դիրքերից ուսումնասիրվել են պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության առանձնահատկությունները, բացահայտվել պահանջմունքային համակարգի բաղադրիչների դրսևորման մեխանիզմները, առանձնացվել են պահանջմունքային տարբեր խմբերի դրսևորման առանձնահատկություններում գերակա անձնային հատկությունները: Բացահայտվել է, որ անձնային հատկությունների տարբեր համադրությունների դեպքում պահանջմունքային համակարգի որոշ բաղադրամասեր միջավայրի հետ հուզական հավասարակշռության հաստատման ադապտիվ գործառույթ են ստանձնում: Անձնային հատկությունների և պահանջմունքների տարբեր

բաղադրամասերի փոխհարաբերության դրսևորումներում անձնային առանձին հատկությունների գործառույթների փոփոխությունները պայմանավորվում են գործունեության և ադապտացիայի պահանջներով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման առանձնահատկությունների մասին ստացված տվյալները հարստացնում են անձնային կառույցում տարբեր բաղադրիչների փոխհարաբերության մասին տեսական պատկերացումները:

Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ընդլայնում են անվտանգության, սոցիալական, ընդունված և ճանաչված լինելու, ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող անձնային հատկությունների մասին գիտական պատկերացումները, պահանջմունքների դրսևորման և փոխհատուցման մեխանիզմներում անձնային հատկությունների գործառույթների մասին գիտական պատկերացումները: Կասկածամտության, ամոթխածության և սոցիալական, անվտանգության, ինքնադրսևորման պահանջմունքների փոխհարաբերության դրսևորումների ստացված տվյալները հարստացնում են այս հատկությունների պաշտպանական մեխանիզմի գործառույթի մասին գիտական պատկերացումները:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները հարստացնում են անձնավորության շեշտված տիպերի պահանջմունքային համակարգի առանձնահատկությունների մասին պատկերացումները: Մասնագիտական տարբեր խմբերում պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության դրսևորման արդյունքներն ընդլայնում են գործունեության արդյունավետության գործոնների մասին տեսական պատկերացումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել անձնավորության զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացման, սոցիալական միջավայրի հետ ուսանողների ակտիվ փոխներգործության մեխանիզմների և անձնային աճի ուղղորդման թրեյնինգների մշակման նպատակով: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել ուսանողների մասնագիտացման գործընթացում անձնային ներուժի կանխատեսման և վարքի կարգավորման, անձնային հատկությունների ու պահանջմունքների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Գիտափորձի արդյունքները կարող են ներդրվել անձի, տարիքային և մանկավարժական, բուհական հոգեբանության դասընթացներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Պահանջմունքների և որոշ հատկությունների փոխհարաբերության, փոխակերպման առանձնահատկությունները պայմանավորված են գործունեության և մասնագիտության պահանջներով:
2. Պահանջմունքների որոշ բաղադրամասեր ու անձնային առանձին հատկություններ նոր գործառույթներ են ստանձնում՝ ելնելով ադապտիվ նպատակահարմարությունից:
3. Պահանջմունքային համակարգում առանձին բաղադրիչների փոխհատուցումը պայմանավորվում է անձնային հատկությունների տարբեր համադրություններով:

4. Գործունեության մեջ և միջանձնային հարաբերություններում պահանջմունքային տարբեր խմբերի դրսևորման, դրանց բավարարման միջոցների ընտրության և կարգավորման գործընթացում առավել կարևորվում են անձի ինտելեկտի, ռադիկալիզմի, վարքի նորմատիվության, գերակայության, դիվանագիտության, անզիջողականության, կասկածամտության, կոնֆլիկտայնության, ամոթխածության, էքստրավերտության, դիստիմիկության, հիպերտիմության, ցուցադրականության դրսևորման մակարդակները:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով.

1-ին փուլում (2006-2008թթ.) կատարվել են անձնավորության դրդապատճառային ոլորտի, պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության ուսումնասիրություն, գրականության տեսական վերլուծություն, հետազոտության առարկայի և օբյեկտի ընտրություն, խնդիրների որոշակիացում, հետազոտության իրականացման մեթոդաբանության, մեթոդների ու մեթոդիկաների ընտրություն:

2-րդ փուլում (2008-2010թթ.) կատարվել են պահանջմունքների և անձնային հատկությունների հետազոտությունները: Հետազոտության նախապատրաստական փուլում կատարվել են նախնական փորձեր, որի ընթացքում ընտրվել են առավել համարժեք մեթոդիկաները:

3-րդ փուլում (2010-2012թթ.) կատարվել են հետազոտության տվյալների մշակումը, քանակական ու որակական վերլուծությունները, ընդհանրացվել են արդյունքները, շարադրվել է ատենախոսությունը, ձևակերպվել են եզրակացություններն ու գործնական առաջարկները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու փորձաքննությունը

Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ապահովվել է հոգեբանական հետազոտություններին ներկայացվող գիտական պահանջներով, հիմնախնդրի տեսական համալիր վերլուծությամբ, ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան հոգեբանական գիտության և պրակտիկայի մեջ ընդունված մեթոդների և մեթոդիկաների կիրառությամբ, փորձարկվողների բավարար թվաքանակի ընտրությամբ: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է տվյալների մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով մշակմամբ, ինչպես նաև քանակական և որակական համալիր վերլուծությամբ:

Հետազոտության կազմակերպման ընթացքն ու ստացված արդյունքները պարբերաբար ներկայացվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հոգեբանության տեսության ու պատմության ամբիոնի նիստերում և գիտաժողովներում: Հետազոտության տվյալներն ու արդյունքները հրատարակվել են 5 հոդվածներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքով 175 տպագիր էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, գիտական վարկածը, նպատակն ու խնդիրները, որոշակիացված են հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Անձնավորության դրդապատճառա-պահանջմունքային համակարգի և անձնային հատկությունների փոխհարաբերության ուսումնասիրության տեսական հիմքերը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ *«Պահանջմունքներն անձի ակտիվության աղբյուրների համակարգում»* ենթագլխում ներկայացված են հոգեբանական գրականության մեջ արտացոլված անձի ակտիվության աղբյուրների համակարգում պահանջմունքների դերի և նշանակության տեսափորձարարական ուսումնասիրությունները: Պահանջմունքների տեսական հարցերը քննարկված են Ա. Մասլոուի, Ա. Ն. Լեոնտևի, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Վ. Ս. Մագունի, Կ. Օբուխովսկու, Շ. Ն. Չխարտիշվիլու, Դ. Ա. Կիկնաձեի, Պ. Մ. Սիմոնովի, Բ. Ի. Դոդոնովի Վ. Դ. Շադրիկովի, Ե.Պ. Իլյինի և այլոց աշխատանքներում: Հոգեբանական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ անձի ակտիվության հիմնական աղբյուրները պահանջմունքներն են: Վերջիններս գործունեության, վարքի շարժիչ ուժերն են, ունեն ակտիվության դրդիչի գործառույթ: Պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունն է, որ դառնում է դրդապատճառ և անձնավորությանը մղում որևէ գործունեության: Ուսումնասիրելով գրականության մեջ պահանջմունքների և դրդապատճառների փոխհարաբերության տարբեր տեսակետների (Ա. Լեոնտև, Բ. Ֆ. Լոմով, Վ. Ա. Իվաննիկով, Ա. Գ. Կովալյով, Կ. Կ.Պլատոնով, Ս. Լ. Ռուբինշտեյն, Ս. Պ. Մանուկյան, Յու. Մ. Օրլով) վերլուծությունները, հասկանալի է դառնում, որ դրդապատճառներն ու պահանջմունքները չեն նույնանում, պահանջմունքները կոնկրետանում և իրացվում են դրդապատճառներում: Պահանջմունքներով է պայմանավորվում անձի՝ իրականության, սոցիալական միջավայրի և այլ մարդկանց նկատմամբ վերաբերմունքը: Պահանջմունքային վիճակն ազդարարում է կարիքի, լարվածության մասին, իսկ պահանջմունքների բավարարվածությունը հանդես է գալիս որպես անձի ադապտացվածության ցուցանիշ: Պահանջմունքների դերը կարևորվել է անձի ուսումնասիրության տարբեր ուղղություններում՝ սոցիալական միջավայր-անձ փոխհարաբերության տարբեր խնդիրների համատեքստում (Գ.Օլլպորտ, Ա. Մասլոու, Կ. Ռոջերս, Վ. Ֆրանկլ, Է. Ֆրոմմ, Կ.Հորնի): Անձի և միջավայրի օպտիմալ փոխազդեցության դինամիկ գործընթացում հիմնային պահանջմունքների բավարարվածությունը դիտարկվում է ադապտացվածության ցուցանիշ:

Երկրորդ՝ *«Անձի հիմնային պահանջմունքները»* խորագրով ենթագլխում վերլուծված և ընհանրացված են պահանջմունքների դասակարգումներում հիմնական պահանջմունքների առանձնացման մոտեցումները: Հետաքրքրություն են ներկայացնում ինչպես պահանջմունքների դասակարգման տարբեր

սկզբունքներն ու չափանիշները, այնպես էլ հիմնական պահանջմունքների առանձնացման մոտեցումները (Կ. Օբուխովսկի, Ա. Մասլոու, Կ. Ալդերֆեր, Վ. Դ. Շադրիկով, Ս. Բ. Կավերին): Պահանջմունքների տարբեր դասակարգումներում առանցքային է մնում այն հարցադրումը, թե որոնք են անձնային ներուժի ակտիվացման համար առավել կարևոր պահանջմունքները: Մեր հետազոտության շրջանակներում պահանջմունքների ընտրությունը պայմանավորվել է նրանց ֆունկցիոնալ դերի և բավարարման օբյեկտի հաշվառմամբ: Այս ենթագլխում ներկայացվել են նյութական, անվտանգության, սոցիալական, ընդունված լինելու, ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման, փոխհարաբերության առանձնահատկությունների տեսափորձարարական ուսումնասիրությունները:

Երրորդ՝ *«Անձնային կառույցի բաղադրիչների հետ պահանջմունքների փոխհարաբերության տեսափորձարարական ուսումնասիրությունները»* խորագրով ենթագլխում քննարկված են անձնավորության հարաբերականորեն կայուն հոգեկան հատկությունների ձևավորման, ամրապնդման և մոտիվացիոն համակարգում վերջիններիս դրսևորման հարցի վերաբերյալ Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Բ. Գ. Անանևի, Ա.Գ. Կովալյովի, Ռ. Ս. Նեմովի, Պ. Մ. Յակոբսոնի, Ե. Պ. Իլյինի տեսակետները: Ներկայացված են անձնային կառույցի տարբեր բաղադրիչների հետ պահանջմունքների փոխհարաբերության տեսակետներն ու մոտեցումները: Յու. Օրլովի (1981), Բ. Ն. Անուրինի (1982), Մ.Լ. Կուբիշկինայի (1997), Բ. Մ. Կիրսանովի (2004), Բ. Յ. Կլիմչուկի (2004), Ն. Ա. Վդովինայի (2007), Ս.Ի. Բոգդանի (2008), Լ.Ա. Կալմագարովայի(2008), Լ.Կ. Բեզումովայի (2009), Ն. Ն. Ակիմովայի (2010) և այլոց տեսափորձարարական ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրդապատճառային տարբեր գործոնների և անձնային հատկությունների ու գծերի միջև երկկողմանի կապ, փոխադարձ կախվածություն կա. անձնավորության հատկությունները պայմանավորում են մոտիվացիայի առանձնահատկությունները, իսկ մոտիվացիոն կառույցները, ամրապնդվելով, դառնում են անձնային հատկություններ: Պահանջմունքներն ու անձնային հատկությունները վարքի կարգավորման գործոնների աստիճանակարգում առանցքային տեղ են զբաղեցնում, և դրանց փոխհարաբերության առանձնահատկություններով է պայմանավորվում անձի գործունեության և ադապտացիայի արդյունավետությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հիմնային պահանջմունքների և անձնային հատկությունների փորձարարական ուսումնասիրություն»** գլուխը ներկայացված է չորս ենթագլուխներով:

Առաջին ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրակազմը, մեթոդներն ու մեթոդիկաները, դրանց ընտրության հիմնավորումը և հետազոտության իրականացման փուլերը:

Հետազոտության կազմակերպման և արդյունքների վերլուծության ժամանակ հենվել ենք համակարգային ուսումնասիրություններին ներկայացվող պահանջների վրա: Ընտրված մեթոդաբանական հիմքերից, ուսումնասիրության առարկայից, նպատակից և խնդիրներից է բխել օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը: Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները. մեթոդի համարժեքությունը ուսումնասիրության

օբյեկտին, խնդիրներին, վստահելիությունը, համապատասխանությունը գիտական հետազոտությունների ժամանակակից մակարդակին և հետազոտության տրամաբանական կառուցվածքին: Ընտրվել են այնպիսի մեթոդիկաներ, որոնք հոգեբանական գիտության մեջ բավականաչափ հայտնի և կիրառված են: Հետազոտության արդյունքների մշակման փուլում տվյալները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական առաջնային և երկրորդային վերլուծության մեթոդներով, իրականացվել է անձնային հատկությունների և պահանջմունքային խմբերի տարբեր բաղադրիչների կարգային համահարաբերակցային վերլուծություն:

Այս գլխի *երկրորդ և երրորդ ենթագլուխներում* ներկայացված են փորձարարական խմբերում պահանջմունքների և անձնային հատկությունների ուսումնասիրության տվյալների քանակական և որակական վերլուծությունները, արդյունքների գրաֆիկական պատկերները, աղյուսակները, ընդհանրացված են առանձնահատկությունները և մասնագիտության բնութագրով պայմանավորված յուրատիպությունները:

Քանի որ անձի գործունեության արդյունքներում են արտահայտվում դրդապատճառային ոլորտի և անձնային հատկությունների դրսևորումները, *չորրորդ ենթագլուխում* ներկայացված է ուսումնառության 4 կիսամյակներում փորձարկվողների ուսումնական գործունեության առաջադիմության համեմատական վերլուծությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է **«Հիմնային պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման ուսումնասիրության արդյունքների վերլուծություն» խորագիրը:**

Պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով կիրառել ենք Սպիրմենի կարգային համահարաբերակցության տեխնիկան: Որոշվել է փոփոխականների կարգային տվյալների միջև կախվածությունը:

Պահանջմունքային խմբերի բաղադրիչների և Ռ. Կետտելի մեթոդիկայի անձնային գործոնների համահարաբերակցային վերլուծության (1, 2 գծապատկերներ) արդյունքում պարզվել է, որ

1. Սոցիալական (միջանձնային) պահանջմունքների բաղադրիչների դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են C, N, F, L, E անձնային գործոնների արտահայտվածության մակարդակով:
2. Ընդունված և ճանաչված լինելու պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են M, N, G, E, H, B, Q1, Q3, Q4 անձնային գործոնների արտահայտվածության մակարդակով:
3. Անվտանգության պահանջմունքների բաղադրիչների դրսևորման առանձնահատկություններում որոշիչ նշանակություն ունեն O, N, L, E, Q1, G անձնային գործոնները:
4. Ինքնադրսևորման պահանջմունքների տարբեր բաղադրիչների դրսևորման առանձնահատկությունները պայմանավորվում են B, G, F, Q1 անձնային գործոնների արտահայտվածության մակարդակով:
5. Ինքնագնահատականի, H գործոնի արտահայտվածության մակարդակով են պայմանավորվում նաև նյութական պահանջմունքների դրսևորման

առանձնահատկությունները:

Գծապատկեր 1



Սոցիալական, ընդունված և ճանաչված լինելու պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող կետտելի անձնային գործոնները

Պահանջմունքային խմբերի բաղադրիչների և անձնային գործոնների համահարաբերակցային կապերի վերլուծության արդյունքում առանձնացվել են նաև տարբեր խմբերի դրսևորումներում գործառույթային իմաստով գերակա անձնային գործոնները:

Անձի ինտելեկտուալ հատկությունների (B, Q1) և ինքնադրսևորման, ընդունված լինելու պահանջմունքների տարբեր բաղադրիչների միջև արտահայտված փոխկախվածությունը պետք է բացատրել այն հանգամանքով, որ պահանջմունքների դրսևորման և դրանց բավարարման հնարավորությունների գնահատման գործընթացի արդյունավետությունը պայմանավորվում է անձի ինտելեկտուալ զարգացման մակարդակով: Յուրաքանչյուր պահանջմունք «ինտելեկտուալիզացվում»՝ արժեվորվում, գնահատվում է, ուստի հասկանալի է, որ անձնավորության ինտելեկտուալ մակարդակը որոշիչ դեր պետք է ստանձնի նպատակի բարդության գնահատման գործընթացում:

Գծապատկեր 2



Անվտանգության և ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող կետտելի անձնային գործոնները

3, 4 գծապատկերներում ներկայացված են պահանջմունքային տարբեր խմբեր ներկայացնող բաղադրիչների և անձնային հատկությունների կարգային համահարաբերակցման հավաստի և նշանակալի կապերը:

Սոցիալական (միջանձնային) պահանջմունքների տարբեր բաղադրիչների և անձնային հատկությունների փոխհարաբերության առանձնահատկությունների վերլուծությունից պարզվել է, որ այս պահանջմունքների դրսևորման թույլ մակարդակը պայմանավորվում է կասկածամտության, կոնֆլիկտայնության, հարձակվողականության, անհանդուրժողականության, անզիջողականության, դրական և բացասական ագրեսիվության արտահայտվածության բարձր մակարդակով: Խոչընդոտելով միջանձնային հարաբերությունների հաստատմանը, խմբային կյանքին ներգրավմանը՝ վերջիններս ադապտացիայի բացասական գործոն են դառնում: Նևրոտիկության, ընկճվածության, ամոթխածության բարձր մակարդակով է պայմանավորվում նաև վարքի մոտիվացիայում մարդկանց կողմից հասկացված լինելու, նրանց հետ ջերմ հարաբերություններ ունենալու ձգտումները: Երկու դեպքում էլ սոցիալական կապերի կորստի խնդիր կա, բայց նույն սոցիալական պահանջմունքը դրսևորվում է տարբեր հատկությունների հետ նրբերանգներով՝ նևրոտիկության դեպքում լիցքաթափման օբյեկտ է պետք, իսկ ընկճվածության դեպքում՝ առաջնային է կիսվելու, հասկացված լինելու, հուսադրվելու ցանկությունը:

Ճանաչված և ընդունված լինելու պահանջմունքային խմբում վարպետության, կոմպետենտության մակարդակի բարձրացման դրսևորման մակարդակը պայմանավորված է նաև հոգեկան գործունեության ընթացքի կանացի կամ տղամարդկային տիպի առանձնահատկություններով: Առնականության բարձր մակարդակի դեպքում փորձարկվողների վարքի մոտիվացիայում վարպետության և կոմպետենտության մակարդակը բարձրացնելու ձգտումն արտահայտվածության բարձր մակարդակ ունի: Իսկ թույլ դրսևորումները պայմանավորվում են կանացիության, ամոթխածության արտահայտվածության բարձր մակարդակով:

Գծապատկեր 3



Սոցիալական, ընդունված և ճանաչված լինելու պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող անձնային հատկությունները

Վարքի մոտիվացիայում ընդունված լինելու պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են նաև նյարդա-հոգեկան կայունության մակարդակով: Կոնֆլիկտային վարքի հակվածությունը, հարձակվողականության, հուզական անկայունության ու գրգռվողականության բարձր մակարդակը պայմանավորում են այս պահանջմունքի թույլ դրսևորումներ: Գործունեության՝ որպես համատեղ իրականացվող սոցիալական ակտիվության արդյունավետությունը պայմանավորված է նաև մարդկանց միջանձնային հարաբերություններով: Բնական է, որ այս հատկությունների արտահայտվածության բարձր մակարդակը, խոչընդոտելով միջանձնային հարաբերությունների հաստատմանը, պետք է պայմանավորի սոցիալական միջավայրում և գործունեության մեջ ընդունված լինելու պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները:

Հարձակվողականության, առնականության, անհանդուրժողականության հակվածության, անզիջողականության, վրիժառության, ռեակտիվ և ինքնաբերական ագրեսիվության բարձր մակարդակով է պայմանավորվում ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության դրսևորման բարձր մակարդակը: Ընկճվածության, ամոթխածության բարձր մակարդակի դեպքում վարքի մոտիվացիայում դիրքն ամրապնդելու ցանկությունն ավելի թույլ է դրսևորվում: Վարքում անհաջողություններից, տհաճություններից խուսափելու մոտիվացիան ուժեղ է դրսևորվում, քանի որ պասսիվության, պարփակվածության, ինտրովերտության բարձր մակարդակը հարաբերակցվում է նաև ինքնավստահության ցածր մակարդակի հետ: Միջանձնային հարաբերությունների հաստատման դժվարությունները, միայնության զգացողության, սոցիալական կապերի կորստի վտանգը պայմանավորում են սոցիալական պահանջմունքների բաղադրիչների գերակա դիրքը:

Կոնֆլիկտայնության ընդհանուր ցուցանիշի և անհաջողություններից, տհաճություններից խուսափելու ցանկության միջև բացահայտված դրական պատճառա-հետևանքային կախվածությունը վկայում է, որ վերջինիս դրսևորման առանձնահատկությունները պայմանավորվում են նաև կոնֆլիկտայնության մակարդակով: Այս ցուցանիշը հատկապես մեծ է մաթեմատիկների ընտրակազմում ($r=0.573$, երբ $p\leq 0.01$): Կոնֆլիկտայնության բարձր մակարդակի պարագայում արտահայտվածության ուժեղ դրսևորում ունի անհաջողություններից խուսափելու ցանկությունը:

Անհաջողություններից, տհաճություններից խուսափելու ցանկության և կասկածամտության (ՕԼՖ, $r=0.518$, երբ $p\leq 0.001$), L (դյուրահավատություն-կասկածամտություն) գործոնի (կենսաբան., $r=0.359$, երբ $p\leq 0.05$) հետ դրական կապեր են արտահայտվել: Ինչը ենթադրում է, որ անհաջողություններից, տհաճություններից խուսափելու բարձր մակարդակը պայմանավորվում է նաև կասկածամտության, վարքում և արարքներում զգուշության բարձր մակարդակով: Անկանխատեսելի հանգամանքների, փոփոխությունների նկատմամբ վերահսկողության ցանկության բարձր դրսևորումները պայմանավորված են կասկածամիտ մարդկանց՝ սոցիումի հետ ունեցած հեռավորությամբ, «ես»-ի պահպանմամբ: Կասկածամտության արտահայտվածության բարձր մակարդակի

դեպքում, երբ մարդը կասկածում է իրականության յուրաքանչյուր երևույթի, հակված է ինֆորմացիայի անընդհատ ուսումնասիրման, ստուգման և ճշգրտման՝ անհաջողություններից ու տհաճություններից խուսափելու համար, դիրքն ամրապնդելու ցանկությունը թույլ դրսևորումներ է ունենում:

Օ (ինքնավստահություն-տագնապայնություն) գործոնի (մաթեմատիկ՝ r=-0.429, երբ p≤0.05, ՕԼՖ՝ r=-0.335, երբ p≤0.05), մաթեմատիկների խմբում ամոթխածության (r=-0.391, երբ p≤0.05), ընկճվածության (r=-0.394, երբ p≤0.05) և դիրքն ամրապնդելու ցանկության միջև արտահայտված բացասական կապերը ենթադրում են, որ ինքնավստահության ցածր մակարդակի դեպքում է նաև, որ դիրքն ամրապնդելու ցանկությունն արտահայտվածություն թույլ դրսևորում ունի: Այս դեպքում մարդկանց հատուկ տագնապայնությունն ու ընկճվածությունը, վիրավորվողականությունն ու տպավորվողականությունը պայմանավորում են դիրքի ամրապնդման ոչ ակտուալությունը: Տագնապայնության բարձր մակարդակ ունեցող մարդիկ մշտապես անհանգստություն են ապրում, քանի որ իրադարձությունները սուբյեկտիվորեն ընկալում են իրենց «Ես»-ին, ինքնագնահատականին վնաս հասցնող:

Գծապատկեր 4



Անվտանգության, ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող անձնային հատկությունները

Անվտանգության, ինքնադրսևորման, ընդունված լինելու պահանջմունքների դրսևորման առանձնահատկություններում նշանակալի դեր ունի ամոթխածության մակարդակը: Փոխպայմանավորվածությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամոթխածությունը նաև պաշտպանական մեխանիզմի գործառույթ ունի: Սոցիալական միջավայրի հետ հուզական հավասարակշռության հաստատման գործընթացում այս հատկության նման գործառույթի ստանձնումը հանդես է գալիս՝ որպես ադապտիվ մեխանիզմ:

Նեղացկոտության, հարձակվողականության, ամոթխածության բարձր մակարդակը, խոչընդոտելով գործունեության և սոցիալական միջավայրում միջանձնային հարաբերությունների հաստատմանը, ինքնադրսևորման էական խոչընդոտ են դառնում: Սեփական անձնային կառույցների, միջանձնային հարաբերությունների քննարկման ու բացասական գնահատումների արդյունքում է

ձևավորվում նպատակահարմար ակտիվությունը. գործունեության թույլ մոտիվացիա, անհաջողության հաղթահարման մեջ ակտիվությունից հրաժարում, ինքնագնահատականի ցածրացում, ինչով էլ պայմանավորված է այս պահանջմունքի դրսևորման առանձնահատկությունները:

Ինքնադրսևորման պահանջմունքների խմբում նվիրում պահանջող գործով զբաղվելու ձգտման և ինտրովերսիա-էքստրավերսիա սանդղակի ցուցանիշների միջև հավաստի բացասական կապ է արտահայտվել ($r=-0.448$, երբ $p\leq 0.05$): Նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկության արտահայտվածության բարձր մակարդակը, փաստորեն, պայմանավորվում է նաև ինտրովերսիայով: Հարաբերակցային այս կապի դրսևորումը պետք է բացատրել այն հանգամանքով, որ էքստրավերտները բնութագրվում են դեպի շրջապատող աշխարհ ուղղվածությամբ, մշտապես նոր տպավորությունների ձգտմամբ: Նրանք թեև նախաձեռնող և ակտիվ են, աչքի են ընկնում վարքի ճկունությամբ, հեշտ են արձագանքում տարբեր առաջարկներին, հանձն են առնում կատարել, բայց նույնքան արագ էլ թողնում են՝ անցնելով նոր գործի: Մինչդեռ նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկությունը ներգրավվածություն, ընկղմվածություն, կենտրոնացվածություն և խորքայնություն է պահանջում: Հարաբերակցային այս կապը դրսևորվել է միայն մաթեմատիկների խմբում, որովհետև այս խումբն առանձնացել է թե' ինտրովերտների թվով, թե' նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկության դրսևորման բարձր մակարդակի խմբային ցուցանիշով:

Ինքնադրսևորման պահանջմունքների համակարգում նորին, անհայտին ձգտման և անհանդուրժողականության հակվածության, անզիջողականության միջև բացահայտված դրական կապերը թույլ են տալիս ենթադրել, որ այս դեպքում կարևորվում են ոչ միայն անձի ինտելեկտուալ մակարդակը, իմացական մոտիվացիան, այլ նաև մրցակցության, առաջ անցնելու գերակայության ձգտումները:

Մաթեմատիկների խմբում նորին, անհայտին ձգտման և կասկածամտության ($r=0.592$, երբ $p\leq 0.001$) միջև դրսևորված դրական կապը պայմանավորված է այս ընտրակազմում գրանցված կասկածամատության բարձր ցուցանիշներով: Պետք է ենթադրել, որ կասկածամտությունն այս դեպքում կապված է մասնագիտության բնութագրի հետ, կասկածելը հանդես է գալիս ճշմարտության բացահայտման, խնդրի, երևույթի մեջ թափանցելու պայման: Կասկածամտությունն անորոշը փնտրելու, իմացական դիսոնանսը հաղթահարելու գործառույթ է ստանձնում: Անձնային հատկությունը, փաստորեն, գործունեության ազդեցության տակ փոխակերպվում, նոր դրսևորում է ստանում: Գործունեության պահանջներից ելնելով՝ անձնային հատկությունը նոր ադապտիվ գործառույթ է ստանում:

Նյութական պահանջմունքների և անձնային հատկությունների միջև արտահայտված կապերի վերլուծությունից պարզվել է, որ էքստրավերտության, իրադրային տագնապայնության, դիստիմիկության, ինքնագնահատականի, Հ գործոնի (վախկոտություն-խիզախություն) արտահայտվածության մակարդակով են նաև պայմանավորվում այս խմբի պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները:

Այսպիսով՝ փորձարարական տարբեր խմբերում անձնային հատկությունների և պահանջմունքների փոխհարաբերության առանձնահատկությունները

պայմանավորվում են մի կողմից՝ պահանջմունքային տարբեր խմբերի, վերջիններիս կազմի մեջ մտնող բաղադրիչների դրսևորման մակարդակով, մյուս կողմից՝ համապատասխան հատկության՝ այլ պահանջմունքների հետ ունեցած հարաբերակցությամբ: Անձնային հատկությունների փոխհարաբերությունը ևս դրսևորվում է պահանջմունքների հետ ունեցած համահարաբերակցային ցուցանիշներում: Վերլուծության արդյունքում առանձնացվել են ինչպես պահանջմունքային խմբերի դրսևորումներում առավել կարևորվող, այնպես էլ նրանց առանձին բաղադրիչները պայմանավորող անձնային հատկությունները:

Եզրակացություններում ներկայացված է տեսական վերլուծության և հետազոտության արդյունքների հիմնական եզրահանգումների ընդհանրական պատկերը.

1. Պահանջմունքներն անձնավորության դրդապատճառային կառույցի այն բազմաֆունկցիոնալ բաղադրիչն են, որով պայմանավորված են ինչպես գործունեության՝ որպես սոցիալական ակտիվության դրդապատճառները, այնպես էլ ստեղծված իրադրությանը տրված հուզական ռեակցիան: Պահանջմունքները սոցիալական միջավայր-անձ փոխհարաբերություններում մի կողմից հոմեոստազի ապահովման գործառույթ ունեն, մյուս կողմից՝ ադապտացիայի խաթարման ազդարարի գործառույթ են ստանձնում: Պահանջմունքների դրսևորումն իրականանում է նպատակահարմար գործողության ընտրության մեխանիզմով:

2. Պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունների հիմքում ընկած են հետևյալ գերակայող անձնային հատկությունները.

ա) Ընդունված, ճանաչված լինելու, ինքնադրսևորման և անվտանգության պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները պայմանավորվում են G (զգացմունքներին ենթարկվածություն-վարքի բարձր նորմատիվություն) անձնային գործոնի արտահայտվածության մակարդակով: Այս գործոնը գործունեության մեջ և միջանձնային հարաբերություններում ինքնադրսևորման, ընդունված և ճանաչված լինելու ուղիների, եղանակների և միջոցների ընտրության կարգավորման և վերահսկման գործառույթ է ստանձնում:

բ) B (ինտելեկտ), Q1 (կոնսերվատիզմ-ռադիկալիզմ) գործոնները, որոնք ինքնադրսևորման, ճանաչված և ընդունված լինելու պահանջմունքների դրսևորման մակարդակը պայմանավորող ինտելեկտուալ հատկություններ են, պահանջմունքների դրսևորման և դրանց բավարարման հնարավորությունների գնահատման գործառույթ ունեն: Ինտելեկտը, ռադիկալիզմը, ապահովելով այս պահանջմունքների բավարարման հնարավորությունների, միջոցների լայն շրջանակը, նպաստում են գործունեության արդյունավետության բարձրացմանը, ծանրակշիռ դեր են ստանձնում ադապտացիոն ներուժի կառույցում:

գ) Կոմունիկատիվ հատկությունների խումբը ներկայացնող E (զիջողականություն-գերակայություն), N (ուղղամտություն-դիվանագիտություն) գործոններն անվտանգության, սոցիալական, ընդունված և ճանաչված լինելու պահանջմունքների դրսևորման մակարդակի կարգավորման, սոցիալական միջավայրի հետ դրական կամ բացասական փոխհարաբերությունների կառուցման գործառույթ են ստանձնում:

դ) Գործունեության մեջ և միջանձնային հարաբերություններում պահանջմունքային տարբեր խմբերի դրսևորման, դրանց բավարարման միջոցների

ընտրության և կարգավորման գործընթացում կարևորվում են անձի անզիջողականության, կասկածամտության, կոնֆլիկտայնության, ամոթխածության, էքստրավերտության, դիստիմիկության, հիպերտիմության, ցուցադրականության դրսևորման մակարդակները:

3. Վարքի մոտիվացիայի ձևավորման գործընթացում պահանջմունքային խմբերում բաղադրիչների դրսևորումն ու փոխհատուցումը պայմանավորվում է անձնային հատկությունների տարբեր համադրություններով՝ նպատակահարմար արդյունքի ընտրության մեխանիզմով: Ելնելով ադապտիվ նպատակահարմարությունից՝ պահանջմունքների մի խմբի դրսևորման ցածր մակարդակը փոխհատուցվում է մյուս խմբի որևէ բաղադրիչի բարձր մակարդակով.

ա) Սոցիալական և ընդունված լինելու պահանջմունքների խմբում տարբեր բաղադրամասերի դրսևորման առանձնահատկությունները պայմանավորվում են նևրոտիկության, ընկճվածության, ամոթխածության, կասկածամտության, կոնֆլիկտայնության, անզիջողականության, անհանդուրժողականության հակվածության, բռնկվողության, դրական և բացասական ագրեսիվության արտահայտվածության մակարդակով:

բ) Անզիջողականությունը, անհանդուրժողականության հակվածությունը, դրական և բացասական ագրեսիվությունը, կոնֆլիկտայնությունը, հարձակվողականությունը, խոչընդոտելով փոխհարաբերություններում սոցիալական պահանջմունքների դրսևորմանը, միջանձնային կապերի հաստատմանը, պայմանավորում են ընդունված և ճանաչված լինելու պահանջմունքային խմբում նպատակահարմար արդյունքի ընտրությունը՝ ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության դրսևորման բարձր մակարդակի փոխհատուցմամբ:

գ) Ամոթխածությունը, նեղացկոտությունը, կոնֆլիկտայնությունը, կասկածամտությունը, խոչընդոտելով ինքնադրսևորմանն ու սոցիալական պահանջմունքների դրսևորմանը, պայմանավորում են անվտանգության պահանջմունքների խմբում անհաջողություններից, տհաճություններից խուսափելու ցանկության դրսևորման բարձր մակարդակը: Անձնային հատկությունների նման համադրության դեպքում անվտանգության պահանջմունքի այս բաղադրամասը միջավայրի հետ հուզական հավասարակշռության հաստատման ադապտիվ գործառույթ է ստանձնում:

4.Պահանջմունքային խմբերի տարբեր բաղադրիչների հետ փոխհարաբերության դրսևորումներում անձնային հատկություններն ադապտիվ գործառույթ ունեն.

ա) Միջանձնային պահանջմունքների բաղադրիչների դրսևորումներում կասկածամտությունը սեփական անձնային գծերի ու հատկությունների քողարկման պաշտպանական մեխանիզմի գործառույթ ունի:

բ) Անվտանգության, ընդունված լինելու, ինքնադրսևորման պահանջմունքների հետ փոխհարաբերության դրսևորումներում ամոթխածությունը ստանձնում է նոր՝ ադապտիվ մեխանիզմի գործառույթ:

5. Մասնագիտությունն անձնային հատկությունների և պահանջմունքների որոշակի համահարաբերակցություն պայմանավորող գործոն է.

ա) մաթեմատիկների մոտ գործունեության պահանջներով պայմանավորված կասկածամտությունը փոխակերպվում է, իմացական դիսոնանսը հաղթահարելու, անորոշը որոշակի դարձնելու գործառույթ է ստանձնում՝ նպաստելով գործունեության արդյունավետության բարձրացմանը:

բ) Անձնավորության շեշտված տիպերի պահանջմունքային խմբերում տարբեր բաղադրիչների ակտուալությունը պայմանավորվում է նաև մասնագիտության բնութագրերով ու գործունեության մեջ ուղղվածության մակարդակով:

գ) Մասնագիտության բնութագրի և պահանջմունքային համակարգում գերակա ձգտումների փոխհարաբերության արդյունքում ձևավորված առաջատար հուզական ուղղվածությունը դառնում է գործունեության դրդապատճառային համակարգի բաղադրամաս:

Գործնական առաջարկներում ներկայացված են անձի զարգացման և ուղղորդման ծրագրերում, ուսումնական նյութերում, թրեյնինգներում անձնային հատկությունների և պահանջմունքների փոխհարաբերության մեխանիզմների մասին ստացված գիտական պատկերացումների ներդրման առաջարկներ: Պահանջմունքային տարբեր խմբերի դրսևորման առանձնահատկությունների մասին ստացված գիտական պատկերացումները ներդրվել են «Նպատակադրում և պահանջմունքներ» թրեյնինգում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Առաքելյան Ա.Դ. Ագրեսիվությունը՝ որպես ադապտացիայի բացասական գործոն: Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, «Մանկավարժ» հրատ., 2010, էջ 198-201
2. Առաքելյան Ա.Դ. Անձնավորության պահանջմունքա-դրդապատճառային համակարգը՝ որպես ուսանողի հասունության ցուցանիշ: «Մանկավարժական կրթության որակի հոգեբանական հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, «Ասողիկ» հրատ., 2010, էջ 23-28
3. Առաքելյան Ա.Դ. Բնավորության շեշտվածությունը՝ որպես ադապտացիայի բացասական գործոն: Հոգեբանությունը և կյանքը: «Զանգակ» հրատ., 2011, 3-4, էջ 143-149
4. Առաքելյան Ա.Դ. Ինքնադրսևորման պահանջմունքների և անձնային հատկությունների փոխհարաբերության առանձնահատկությունները: «Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար. մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա» Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Երևան, «Մանկավարժ» հրատ., 2013, էջ 27-31
5. Առաքելյան Ա.Դ. Պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցման առանձնահատկությունները: «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» 4-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 24-25

АРАКЕЛЯН АННА ДАВИДОВНА

КОРРЕЛЯЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ОСНОВНЫХ ПОТРЕБНОСТЕЙ И ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ

(На примере студентов Педагогичесого Вуза)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности».

Защита диссертации состоится 17 июня 2014 года в 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: 0010. Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В условиях современного переходного общества на первый план выходит направленность активности личности на самоактуализацию. В этом контексте особенную важность приобретает системное исследование особенностей взаимодействия отдельных элементов потребностей и личностных качеств.

Цель исследования. Выявить корреляционные особенности основных потребностей и личностных качеств.

В основе исследоеания- гипотеза: Исходя из адаптивной целесообразительности, взаимоотношение качеств личности и потребностей проявляется по разному. В группах потребностей проявления компонентов обусловлены разными сочетаниями личностных качеств. В проявлениях потребностей некоторые личностные качества имеют преобладающее функциональное значение. При некоторых сочетаниях личностных качеств в системе потребностей некоторые составляющие приобретают новые функции.

Для достижении основной цели, были выдвинуты следующие задачи:

1. Анализиовать теоретические концепции о роли и значения потребностей в системе источников активности личности, взаимоотношения потребностей и элементов структуры личностни психологической научной литературе.
2. Выявить наиболее важные личностные качества личности, регулирующие проявления потребностей (материальных, социальных, безопасности, самореализации и потребности быть принятым).
3. Выявить механизмы проявления компонентов системы потребностей.

4. Выявить функции личностных качеств при разных проявлениях потребностей.
5. Выявить роли характеристик специальности и направленности деятельности в проявлениях взаимоотношений личностных качеств и основных потребностей.

Научная новизна исследования. Проведено системное исследование особенностей взаимодействия разных групп потребностей и личностных качеств. Выявлены личностные качества, определяющие особенности проявления потребностей разных групп.

Теоритеческая значимость исследования. Полученные результаты расширяют круг научных представлений об особенностях взаимодействий потребностей и личностных качеств.

Практическая значимость исследования. Полученные в исследовании результаты могут быть использованы в научной организации тренингов личностного роста, в формировании личностных качеств и потребностей, а также в учебных материалах курсов «Общая психология», «Психология личности», «Возрастная психология».

Достоверность и обоснованность теоретических и практических результатов обеспечены выбором методологических основ, обьективностью и валидностью комплекса методик, достаточным количеством обследованного контингента. Результаты исследования периодически обсуждены на заседаниях кафедры Теории и истории психологии и на научных конференциях.

Структура и обьем работы. Диссертация состоит из введения, трех глав, общих выводов, практических рекомендаций, списка литературы и приложения. Основная часть работы изложена на 175 страницах.

ВО ВВЕДЕНИИ обоснована актуальность темы, ее научная и практическая значимость. Предсатвлени цель и задача работы и положения, выносимые на защиту.

В ПЕРВОЙ ГЛАВЕ – «Теоретические основы исследования взаимосвязи личностных качеств и мотивационно-потребностной системы» - представлены теоретические подходы и экспериментальние исследования взаимосвязей потребностей и личностных структур.

ВО ВТОРОЙ ГЛАВЕ- «Экспериментальное исследование основных потребностей и личностных качеств» - представлены методологические основы, методы изучения, этапы организации и результаты исследования основных потребностей и личностных качеств.

В ТРЕТЬЕЙ ГЛАВЕ - «Анализ результатов исследования корреляций основных потребностей и личностных качеств» - анализированы корреляционные связи потребностей и личностных качеств.

Работа завершается обшими выводами и практическими рекомендациями.

По теме диссертации опубликованы 5 статей.

ARAKELYAN ANNA DAVID

Correlation Features of Basic Needs and Personal Qualities (by the example of pedagogical university students)

Thesis for degree of candidate of psychological specialty 19.00.01 -"General psychology, theory and History of Psychology, personality psychology ".

The defense of the thesis will be held on June 17, 2014 at 12:00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after KH. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

The modernity of the issue. In conditions of transforming society when serious problems of political, social, economic, and cultural transformations are put into the public, the social demands of personal activity and qualities radically change resulting in a worsening of the social environment adaptation, individual self-expression, self-realization ways and means of selection. In this context, special importance is the systematic study of the interactions of the individual elements needs and personal qualities.

The aim of the investigation is to identify the correlation characteristics of basic needs and personal qualities.

The basis of the investigation is **the principal hypothesis.** Based on adaptive expedience, the relationship of personality traits and needs are expressed differently. In groups the expression of components are conditioned by the different combinations of personality traits. In expressions of needs some personality traits has predominant functional importance. In certain combinations of personality traits some components get new functions in the needs system.

For the fulfillment of the principal aim the **following goals have been put forward**.

1. Analyze the role and importance of the needs in the activity system, acting approaches of needs relationship with other components of the personal structure.
2. Identify the expression of material, social, security, and self-actualization needs and the most important personal qualities which regulate the choice and control of satisfaction resources.
3. Identify the manifestation mechanisms of the need system components.
4. Identify the functions of the personal qualities in various manifestations of the needs.
5. Identify the role of the characteristics of specialty and focus of activities in the manifestations of the relationship of personal qualities and basic needs.

The scientific novelty of the investigation. The relationship specifics of different groups of needs and personal qualities are studied and discovered. Personal qualities that define the features of display needs of different groups are identified.

The theoretical significance of the investigation. The obtained results extend the range of scientific ideas about the features of interactions needs and personality traits.
Expression results of needs and personal qualities relationship in different professional groups give us more idea about the efficiency factors of theoretical understanding.

The practical significance of the investigation. The results of the study can be used in universities to improve learning process, in personal growth trainings, in shaping personality traits and needs, as well as in training materials on the topics as "General Psychology", "Personality Psychology", and "Psychology of Age".

The investigation experiments and data reliability. The investigation results have been incessantly discussed during the meetings held by the chair of the Theory and History of Psychology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Reliability and certainty of the results are grounded by the chosen methodological bases, by the scientific objectivity and relevance of the methods used, by the number of the individuals having been experimented as well as by the quality and quantity analyses of the data.

The introduction embraces the issue modernity, the principal hypothesis, the object, the subjects matter, the aim and the problems of the investigation, the methodologies adopted, its scientific novelty, the theoretical and practical significance of the studies, the investigation experiments and the dissertation structure.

Structure and scope of the work: The thesis consists of an introduction, three chapters, general conclusions, practical recommendations, bibliography and appendixes. The work consists of 175 pages.

Chapter one – "Theoretical basis of the study of personal qualities and need-motivational system relationship" touches upon theoretical approaches and experimental studies of the relationships needs and personality structures.

Chapter two – "Experimental study of basic needs and personality traits" covers the methodological bases, methods of study, stages of organization and results of the study of basic needs and personal qualities.

Chapter three – "Analysis of the results of research correlations basic needs and personality traits" presents the analysis of the needs and personal qualities correlations` connections.

The thesis ends with the general conclusions.

Five articles were published dedicated to the investigation activities.